**«ԷԼԻՏ ՎՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 5-րդ փողոց 2/22 հողամասում հասարակական նշանակության շինությունների վերակառուցման ՇՄԱԳ հաշվետվության հանրային 2-րդ լսման վերաբերյալ**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**17.11.2025թ.** **բն. Նորապատ**

2025թ. նոյեմբերի 17-ին ժամը 11:00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ «Օրենք», ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածով սահմանված կարգով, Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում՝ 5-րդ փողոց, 11 շենք, տեղի ունեցավ «Էլիտ Վուդ» ՍՊԸ կողմից նախատեսվող Նորապատ բնակավայրի 5-րդ փողոց 2/22 հողամասում հասարակական նշանակության շինությունների կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը:

Ներկա էին հանրային քննարկման կազմակերպողը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Գոհար Մինասյանը, Մեծամոր համայնքի Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Նորայր Դարբինյանը, Նորապատ բնակավայրի աշխատակիցները, բնակիչները, շահագրգիռ հանրությունը և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակող ընկերության ներկայացուցիչները, ձեռնարկատերը (Մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով և լուսանկարները կցվում են արձանագրությանը):

**Ելույթ ունեցան՝**

Հանրային քննարկումը սկսեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Գոհար Մինասյանը: Ներկայացրեց հանրային լսման առարկան, նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկման իրականացման կարգը՝ համաձայն կառավարության որոշման: Նշեց, որ հանրային քննարկման է ներկայացվել ՇՄԱԳ հաշվետվության լրամշակված տարբերակը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները և մի շարք գերատեսչություններ, որոնց կարծիքների հիման վրա ՇՄԱԳ հաշվետվությունը լրամշակվել է:

**Նախատեսվող գործունեության նախագծային լուծումները ներկայացրեց պատվիրատուի նախագծող Արմեն Մելքոնյանը:**

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակող՝ Հրանուշ Ալեքսանյանը** պատասխանեց շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և դրանց կանխման միջոցառումների վերաբերյալ հարցերին:

Հնչեցին հարցեր կապված տեխնիկական ջրամատակարարման, շենքերի վերակառուցման մակերեսների, վերաբերյալ, որոնց մանրամասն պատասխանները ամփոփաթերթի տեսքով կցվում է սույն արձանագրությանը:

**Գոհար Մինասյանը** եզրափակեց հանրային լսումը, նշելով, որ հանրային լսումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հանրային լսման արձանագրությունը, տեսաձայնագրությունը կներկայացվի նախաձեռնողին:

Վարող՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի մասնագետ Գոհար Մինասյան

______________________

Նախաձեռնողի ներկայացուցիչ՝

Հ. Ալեքսանյան

______________________